ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 84/32-Հ «27» 05 2026թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ԷՍՔԻԶՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Հայտարարել հայ նշանավոր գրող, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, գրականագետ Զապել Մկրտչի Եսայանի (Հովհաննիսյանի) հիշատակը հավերժացնող արձանի էսքիզային առաջարկի բաց մրցույթ:

2. Ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) Հովհաննես Հովհաննիսյան - ԵՊՀ ռեկտոր (հանձնաժողովի նախագահ),

2) Միքայել Հովհաննիսյան - ԵՊՀ միջազգային կապերի, զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտոր,

3) Դավիթ Հովհաննիսյան - ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավար,

4) Մխիթար Գաբրիելյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,

5) Սիրանուշ Բաղումյան - ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ:

3. Սահմանել, որ.

1) Մրցույթին կարող են մասնակցել հետաքրքրված բոլոր անհատները, խմբերը կամ կազմակերպությունները:

2) Զապել Մկրտչի Եսայանի (Հովհաննիսյանի) հիշատակը հավերժացնող արձանը տեղադրվելու է Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 1 հասցեում՝ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում:

3) Մրցույթին ներկայացվող էսքիզային առաջարկը պետք է պարունակի արձանի նախագծային և կառուցման ընդհանուր արժեքի, կառուցման ժամանակացույցի, նյութի տեսակի, գույնի, չափերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ և նկարներ:

4) Մրցույթին ներկայացված հայտերը քննարկվելու և գնահատվելու են սույն հրամանի 2-րդ կետում նշված մրցութային հանձնաժողովի փակ նիստում՝ հայտերի ներկայացման ավարտից հետո 10-օրյա ժամկետում՝ պահպանելով մասնակիցների գաղտնիությունը:

5) Ներկայացված բոլոր առաջարկները (ներառյալ մրցութային հանձնաժողովի կողմից չընդունվածները) ցուցադրվելու են 7օր՝ մրցույթի արդյունքներն ամփոփելուց առաջ և 7օր՝ մրցույթի հաղթողներին հայտարարելուց հետո:

6) Մրցույթի գլխավոր մրցանակին արժանացած էսքիզային առաջարկը հիմք է ընդունվելու արձանի կառուցման համար, իսկ հեղինակի հետ կնքվելու է քաղաքացիաիրավական պայմանագիր:

7) Մրցույթի մրցանակային ֆոնդը կազմում է 1.000.000 ՀՀ դրամ, որից գլխավոր մրցանակը կազմում է 500.000 ՀՀ դրամ, երկրորդ մրցանակը՝ 300.000 ՀՀ դրամ, երրորդ մրցանակը՝ 200.000 ՀՀ դրամ:

8) էսքիզային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքային օրերին և ժամերին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի (ք. Երևան, Ալեք Մանուկյան 1) 507 սենյակ: Արձանի էսքիզային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը 2026 թ. հունիսի 20-ն է:

4. Սույն հրամանով սահմանված բաց մրցույթի հայտարարությունը տեղադրել ԵՊՀ պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում:

5. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել մրցութային հանձնաժողովի անդամներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ